ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/4357/02/24 **ք. Երևան**
19 Հունիսի 2024թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Ա.Քյուրքչյանի (այսուհետ՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «ԻՓԻԷՍ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարան համայնքային կառավարչական հիմնարկի՝ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Դատարանի՝ 10.06.2024թ. «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Ընկերության անունից էլեկտրոնային համակարգի միջոցով կրկին ներկայացվել է հայցադիմում, որը 13.06.2024թ. մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանին հասանելի է դարձել 14.06.2024թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ դրանք ներկայացվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by KYURKCHYAN ALLA 8010940461 Date: 2024.06.19 10:45:24 AMT **ԱԼԼԱ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am